

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻ ԴԱԼԻ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԻՇԻԿԻ ԶՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՓԱԼԻ»
ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Լ. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան 2020

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ` օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

**Հանքավայր`** ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում` կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի արդյունահանում` օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական` երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

**Բնապահպանական կառավարման պլան`** ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի` որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Յողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**

ՀՀ Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի «Փալի» տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի հետախուզման աշխատանքներ:

Հետախուզման համար ընտրված 2.22հա տարածքը գտնվում է Խաչիկ գյուղից մոտ 5կմ, Գնիշիկ գյուղից 4.5կմ և Ամաղու գյուղից 4.7կմ հեռավորության վրա:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոզոյի և մեզոզոյի նստվածքային, պալեոգենի նստվածքային և հրաբխածին-նստվածքային, պլիոցենի հրաբխային, չորրորդականի հրաբխային և նստվածքային, ժամանակակից դելյուվիալ և պրոլյուվիալ-ալյուվիալ առաջացումները:

Տեղամասի քվարցիտների հանքերևակմանը հարող տարածքների ընդհանուր երկրաբանական կառուցվածքը վկայում է, որ այստեղ հեռանկարային են բացառապես վերին դևոնի առաջացումները, որոնք մերկանում են Արփա և Գնիշիկ գետերի ավազաններում: Մասնավորապես Գնիշիկ գետի միջին հոսանքի ավազանում 1991-95թթ նախնական գնահատական ստացած Գնիշիկ-Նորավանքի քվարցիտների երևակումների խումբը: Տեղամասն իր երկրաբանական կառուցվածքով նման է Գնիշիկի հանքավայրի երկրաբանական կառուցվածքին:

Քվարցիտները մերկանում են Գնիշիկ գետի վտակի ձախ ափին և տարածվում են դեպի հյուսիս-արևմուտք մինչև 1250մ երկարությամբ, մերկացած զառիթափի բարձրությունը հասնում է 5-ից մինչև 10-25մ և ձգվում է 800մ, այնուհետև դեպի արևմուտք քվարցիտները ծածկվում են ժամանակակից առաջացումներով և մերկանում են ոչ լրիվ հզորությամբ:

Հիմք ընդունելով մերկացումների և հարևանությամբ գործող Գնիշիկի քվարցիտների հանքավայրի արդեն իսկ գոյություն ունեցող բացահանքի տվյալները, կարող ենք ասել, որ տեղամասում քվարցիտները ներկայացված են սպիտակ գույնով և առանձին շերտերի սահմաններում այդ քվարցիտները ամբողջությամբ, իսկ որոշ մասերում մասամբ, վերածված են ավազի: Հանդիպում են նաև սպիտակ քվարցիտներ, որոնք բավականին ամուր են:

Վերին դևոնի հաստվածքը տեղամասի սահմաններում ներկայացված է կավաավազաքարային, ավազաքարային, լիմոնիտացված կավային թերթաքարերով և միմյանց հերթափոխող քվարցիտների ու կավաավազաքարային թերթաքարերի ստվարաշերտերով, որոնց հզորությունը տատանվում է 35-50մ սահմաններում: Վերջիններս երբեմն ծածկվում են կրաքարերով ու կավաավազաքարային թերթաքարերով: Քվարցիտները հիմնականում տեղադրված են ներգրավող հաստվածքի միջնամասում, որտեղ դրանք կազմում են քվարցիտների 40-50մ գումարային հզորությամբ շերտադարսվածք /ըստ ֆոնդային նյութերի

տվյալներ/, որտեղ հանդիպում են մաքուր քվարցիտների առանձին բարակ շերտեր և ոսպնյակաձև նրբաշերտեր, որոնք ընդմիջվելով թերթաքարերի, ավազաքարերի ու կրաքարերի տարբեր հզորությունն ունեցող շերտերով՝ կազմում են նշված ապարների շերտափոխության գոտիներ: Քվարցիտների անկման ազիմուտը հյուսիս հյուսիս-արևելք է, անկման անկյունը՝ 40-480 :

Տեղամասում օգտակար հանածոյի հաստվածքը կազմված է միմյանցից զանազանվող առանձին շերտերից, որոնք ներկայացված են տարբեր աստիճանի լիմոնիտացված և հեմատիտացված, հիմնականում բաց մոխրագույն, կամ բաց շագանակագույն, իսկ առանձին դեպքերում սպիտակ քվարցիտներով:

Քվարցիտների հանքերևակման մանրազնին հետախուզման աշխատանքների նախատեսվում է իրականացնել համաձայն ГОСТ 22551-77 «Песок кварцевый, молотый песчаник, кварц и жильный кварц для стекольной промышленности» տեխնիկական պահանջների՝ որպես ապակու հումք և ֆլյուս, ուսումնասիրելով քվարցիտները մակերեսում և խորքում ամբողջ հզորությամբ:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

«Յուլի Դալի» ՍՊ ընկերությունը «Փալի» տեղամասում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ.

- տոպոհանույթ – 1:1000 մասշտաբի – 2.22հա,
- հետախուզահորերի անցում և փաստագրում – 32 գծ.մ.,
- հորատանցքերի հորատում և փաստագրում – 385 գծ.մ.,
- փորվածքների հետլցում – 76.8մ³,
- ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական փորձարկումներ – 61 նմուշ,
- քիմիական անալիզ – 14 նմուշ,
- միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրություններ – 6 նմուշ,
- հորատման հրապարակների կառուցում – 240մ²,
- խախտված հողերի ռեկուլտիվացիա – 148.8մ³,
- հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ.
- ռադիոմետրիական ուսումնասիրություններ:

▪ **Նախագծման նորմատիվ-իրավական հենքը**

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն

առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու

կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1663-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ **Գտնվելու վայրը**

Հետախուզման համար ընտրված 2.22հա տարածքը գտնվում է Խաչիկ գյուղից մոտ 5կմ, Գնիշիկ գյուղից 4.5կմ և Ամաղու գյուղից 4.7կմ հեռավորության վրա: Տեղամասը Խաճիկ գյուղի հետ կապված է 2.5կմ գրունտային և 5կմ ասֆալտապատ ճանապարհով (նկար 1-3): Տեղամասից շուրջ 1.3կմ դեպի հարավ անցնում է Խաչիկ-Գնիշիկ բարձր լարման էլեկտրոհաղորդման գիծը, որից հնարավոր է կազմակերպել տեղամասի հետագա էլեկտրամատակարարումը:

Տեղամասը գտնվում է Գնիշիկ գետի միջին հոսանքի ավազանում, 2220-2295մ բացարձակ բարձրությունների վրա և բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ ըստ Գրինվիչի. 39° 39' 22" հյուսիսային լայնության, 45° 14' 54" արևելյան երկայնության:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը զբաղեցնում է 2.22հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

- | | | | |
|--------------|-----------|--------------|-----------|
| 1. X=8521119 | Y=4391311 | 6. X=8521234 | Y=4391417 |
| 2. X=8521127 | Y=4391345 | 7. X=8521194 | Y=4391323 |
| 3. X=8521174 | Y=4391571 | 8. X=8521177 | Y=4391316 |
| 4. X=8521235 | Y=4391540 | 9. X=8521141 | Y=4391289 |
| 5. X=8521274 | Y=4391520 | | |




Նկար 1.


ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶ VAYOTS DZOR MARZ

Մարզկենտրոնը՝ ք. ԵՂԵԳՆԱԶՈՐ
3 քաղաք, 52 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը 315 կմ.

YEGHEGNADZOR the center
3 cities 52 settlements
Instate roads 315km



Նկար 1.



Նկար 2.

ARM WGS-84 ցանցը ներկայացված է կապույտով
 Արտագծված է 1:50000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզից

▪ **Ռեփեֆ, երկրաձևաբանություն**

Երկրաձևաբանական տեսակետից տարածաշրջանը հարում է Մերձարաքսյան լեռնային մարզի Ուրծ-Վայքի ենթամարզին: Տարածաշրջանի մակերևույթը լեռնոտ է և բնութագրվում է խիստ մասնատված, կտրտված, լերկացման-ողողամաշման տիպի ռեփեֆով:

Տարածքը ներառում է Վայքի և Վարդենիսի լեռների արևմտյան հատվածները:

Վայքի լեռները հանդիսանում են Չանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լեռնաճյուղ: Տ-աձև ձգվում է զուգահեռականին մոտ ուղղությամբ: Լեռնաշղթան ունի ծալքաբեկորավոր կառուցվածք: Երկարությունը 64 կմ է, առավելագույն բարձրությունը՝ 3120 մ (Գոգի լեռ) : Արևմտյան մասը աստիճանաբար ցածրանում, ճյուղավորվում և ձուլվում է Նախիջևանի հարթավայրին: Կան մինչև 150 մ բարձրության էքստրուզիվ, կոնաձև գմբեթներ:


Հյուսիսային լանջը Էրոզիոն-դենուդացիոն աստիճաններով ցածրանում է դեպի Արփայի հովիտը: Կան քարայրեր: Հարավային և հարավ-արևմտյան լանջերը ավելի մասնատված են, ցածրանում են դեպի Միջինարաքսյան իջվածքը: Լանջերի ստորին մասերում զարգացած է բեղլենդը: Արփա և Նախիջևան գետերի վտակները լեռնաշղթայի լանջերին առաջացրել են ջրհավաք ձագարներ և Էրոզիոն գոգավորություններ, որոնց մեջ աչքի է ընկնում հարավային լանջին զարգացած Չահուկի կրկեսաձև գոգավորությունը: Արևելյան մասում կան սառցապատման հետքեր (կառեր, մորեններ):

Բարձրալեռնային գոտում արտահայտված է սառնամանիքային հողմահարումը, 2200—2250 մ վրա շատ են քարացրոնները: Կան ժայռային մնացուկներ, քարափներ ու դարափուկեր: Լանջերը ծածկված են տափաստաններով, տեղ-տեղ՝ տրաքանտային թփուտներով, գազաթային մասը՝ ենթալպյան և ալպյան մարգագետիններով:

Վարդենիսի լեռները ձգվում են Գեղամա լեռների Գնդասար գագաթից մինչև Մեծ Ծարասարի լեռնահանգույցը: Երկարությունը շուրջ 60 կմ է: Առավելագույն բարձրությունը Վարդենիս լեռն է, որը ունի 3522 մ բարձրություն: Հյուսիսային լանջերը մեղմաթեք ձուլվում են Սևանա լճի հարավային եզրին: 3200-3300 մ բարձրության վրա կան հրաբխային կոներ: Հարավային լանջերը գառնաթափ են, որոնք զոյացնում են առանձին լեռնաբազակներ:


Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:

ԳԵՈՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՐԻԵՐԻ ԶԱՐՏԵԶ



1 - Միջին բարձրության ծալքաբեկորայինլեռնաշղթաներ /1500-2500մ/ ուղիղ լանջերով և ալիքաձև գագաթների խորը կտրտված V-նման հովիտներով և ձորակներով

Նկար 4.



Նկար 5.

Բուն տեղամասում արտաձին երկրաբանական պրոցեսների արտահայտված չեն, մոտակա հայտնի սողանքային մարմինը գտնվում է հայցվող տեղամասից 300մ հարավ-արևելք՝ հակառակ կողմնադրություն ունեցող լանջին (նկար 6):




Նկար 6.

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը: Գրունտների առավելագույն արագացումները մարզի տարածքում տատանվում են 0.2 g - 0.5 g: Ամենաբարձր արագացումները (0.5 g) գրանցված են Վայոց ձորի մարզի արևմտյան (Գառնու տեկտոնական խզվածքի հարևանությամբ) և արևելյան ծայրամասերում (Փամբակ-Սյունիք-Սևան խզվածքի հարևանությամբ), երևակման շրջանում գրունտի առավելագույն արագացումները հիմնականում գտնվում են 0.2g-0.3g տիրույթում:

- **Շրջանի կլիման**

Երևակման տարածքին բնորոշ է չափավոր ցուրտ լեռնային կլիման, երկարատև ու ցուրտ ձմեռով (Նկար 7): Ռելիեֆի փակ գոգավորություններում այն դաժան է՝ հաճախ կրկնվող սառնամանիքային եղանակներով: Ամռանը այստեղ տաք է, համեմատաբար խոնավ, լինում են չոր ժամանակաշրջաններ: Սառնամանիքային օրերի թիվը ընդհանուր առմամբ կազմում է 150-180: Օդի ջերմաստիճանի օրական ամսական ու տարեկան տատանումները, որոնց նշանակությունը մեծ է ժամանակակից ֆիզիկաաշխարհագրական պրոցեսների զարգացման համար, ունեն հետևյալ պատկերը: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը 500-600 մմ է, որից տարվա տաք ժամանակաշրջանին (ապրիլ-հոկտեմբեր) բաժին է ընկնում 300- 350 մմ, իսկ ցուրտ ժամանակաշրջանին

(նոյեմբեր-մարտ)՝ 200-250 մմ: Գարնանային անձրևները հորդառատ են և ուղեկցվում են ամպրոպներով: Ձմռանը գոյանում է կայուն ձյունածածկ՝ 50-70 սմ հաստությամբ, որը տևում է մոտ 4 ամիս: Առաջին ձյունը թափվում է հոկտեմբերի երկրորդ կեսին, իսկ ձնհալքը սկսվում է ապրիլին:



Նկար 7.

▪ **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման մոտակա կայան Գնիշիկի քվարցիտների հանքավայրի և դրան հարակից տարածքներում չկա:

Տեղամասին ամենամոտ գտնվող Խաչիկ և Գևորգի բնակավայրերի տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով նշված ձեռնարկը, տեղամասի տարածքի մթնոլորտային օդում փոշու ֆոնային կոնցենտրացիան ընդունվում է որպես $0,2 \text{ մգ/մ}^3$, ծծմբի երկօքսիդինը՝ $0,02 \text{ մգ/մ}^3$, ազոտի երկօքսիդինը՝ $0,008 \text{ մգ/մ}^3$ և ածխածնի օքսիդինը՝ $0,4 \text{ մգ/մ}^3$:

▪ **Ջրային ռեսուրսներ**


Հայցվող տարածքի մակերևութային ջրերի ցանցը շատ թույլ է զարգացած: Միակ գետը Գևորգիկն է՝ Արփայի ձախ վտակը: Սկիզբ է առնում Վայքի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2460 մ բարձրությունից: Երկարությունը 20 կմ է, ջրհավաք ավազանը՝ $64,37 \text{ կմ}^2$: Գետահովիտը V-աձև է, խորությունը՝ 50—80 մ: Սնումը հիմնականում ձնաանձրևային (74 %) է, վարարումը՝ գարնանը: Տարեկան միջին ծախսը $0,2 \text{ մ}^3/\text{վ}$ է: Սելավաբեր է, ջուրը օգտագործվում է ոռոգման նպատակով: Ամառուկի ձորով անցնելիս կոչվում է Նաե Ամառուկ գետ:

Հայցվող տեղամասը գտնվում է Գևորգիկ գետի վտակ հանդիսացող Ջրախանա (տոպոգրաֆիական քարտեզերի վրա՝ Чархана) գետակի հունից 1,7 կմ հեռավորության վրա:

«Փալի» տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները համանման են բուն Գևորգիկի հանքավայրի պայմաններին: Գրունտային, ստորերկրյա ջրերի հորիզոններ Գևորգիկի հանքավայրում չեն հայտնաբերվել: Դրա մասին վկայում են հայցվող տեղամասի մոտակայքում գտնվող «Վայոց Ձոր ֆրոկտ» ՍՊ ընկերության բացահանքի դիտարկումները:

▪ **Հողեր**

Ուսումնասիրության տարածքի շրջանում զարգացած են մարգագետնատափաստանային, շագանակագույն հողերը և սևահողերը (սկար 8): Մարգագետնատափաստանային տիպիկ հողերը ձևավորվում են համեմատաբար չափավոր կլիմայական պայմաններում նվազ բուսականության տակ: Այս տիպի հողերը արունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ



- ① Մարզագետնատափաստանային տիպիկ մնացորդային-հագեցած փոքր հզորության թույլ հողմահարված
- ② Սևահողեր լվացված միջին հումուսային միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ③ Սևահողեր լվացված թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ④ Սևահողեր սովորական մնացորդային-կարբոնատային թույլ հումուսացված փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑤ Սևահողեր սովորական մնացորդային-կարբոնատային թույլ հումուսացված միջին հզորության կավավազային միջին հողմահարված մշակովի
- ⑥ Մուգ-շագանակագույն մնացորդային-կարբոնատային միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑦ Մուգ-շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ⑧ Մուգ-շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության ավազակավային միջին - ուժեղ հողմահարված
- ⑨ Մուգ-շագանակագույն մնացորդային-կարբոնատային հզոր կավավազային մշակովի
- ⑩ Մուգ-շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության ավազակավային թույլ հողմահարված մշակովի
- ⑪ Շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության ավազակավային թույլ հողմահարված
- ⑫ Շագանակագույն մնացորդային-կարբոնատային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑬ Բաց-շագանակագույն քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑭ Արմատական ապարների ելքերի և թերի զարգացած քարքարոտ հողերի համալիր

Նկար 8.

արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր:

Ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Տարածքի սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Աղյուսակ 1.

Հողատիպը և ենթատիպը	խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
Տիպիկ մարգագետնատափաստանային	0-11	8.9	31.7	6.3	4.0
	11-26	6.0	25.0	6.2	3.6
	26-54	4.3	21.6	6.4	3.4
	54-89	1.9	19.5	7.0	2.8

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Լվացված սևահողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 2-ում:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի հաշվին:

Աղյուսակ 2.

Սևահողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնները և խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	
Լվացված սևահողեր	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	չի որոշված

A – հողի վերին, հումուսով առավել հարուստ շերտ, B - անցողիկ հորիզոն, C – մայրական ապարատեսակ

Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Աղյուսակ 3.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս SO ₄		
Մուգ-շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	Տեղա8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց-շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Տեղամասում հողի բերրի շերտը զարգացած է շատ թույլ: Այն ներկայացված է մնացորդային կարբոնատացված լվացված սևահողերով: Բուն հողաբուսական շերտի հզորությունը չի գերազանցում 30սմ, դրանք հիմնատակվում են քվարցիտների, կրաքարերի, ավազաքարերի և թերթաքարերի բեկորներից կազմված բերվածքային առաջացումների շերտով:

Ընդերքօգտագործման նպատակով հայցվող 10-025-01106-00110 կադաստրային ծածկագրով հողակտորը հաշվառված է որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողեր:


▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Գնիշիկի քվարցիտների հանքավայրի «Փալի» տեղամասի բուսական ծածկը ներկայացված է Վայոց ձորի մարզին բնորոշ փետրախոտային տափաստանային բուսականությամբ (նկար 9): Այստեղ գերիշխում են

փետրախոտերը (*Stipa tirsia*, *S. capillata*), *Thymus kotschyanus*, *Tanacetum chiliophyllum*:

Տարածված են նաև *Festuca valesiaca* Gaudin, *Koeleria albobii* Domin., *Koeleria cristata* (L.) Pers., *Elytrigia trichophora* տեսակները:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N781-Ն որոշման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելու դեպքում հիմնադրույթային փաստաթղթի, նախատեսվող գործունեության հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ): Դրա տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին:



Նկար 9.

Տարածաշրջանի կենդանական աշխարհը չափազանց բազմազան է: Թռչուններից հանդիում են բազմաթիվ ճնճղուկազգիներ, որոնցից են արտույտների, սերինոսների, դրախտապանների տարբեր տեսակները:

Երևակման և հարակից տարածքներում ողնաշարավոր կենդաններից դիտարկվել են նապաստակ, աղվես, սովորական դաշտամուկ, միխրագույն առնետ: Արձանագրվել են գայլի կենսագործունեության հետքեր: Բուռն հայցվող տեղամասում առկա են դաշտամկների գետնափոր բներ: Բազմաթիվ անգամ նկատվել է դաշտային արտույտներ, բայց բներ տեղամասի սահմաններում բներ չեն գտնվել:

▪ **Վտանգված Էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**


Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի տարածքը ներառված է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի սահմաններում:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը նախատեսված է ՀՀ կառավարության կողմից հաստատված ԲՀՊՏ-ների զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրով: Պահպանվող լանդշաֆտի ստեղծման աշխատանքները մեկնարկեցին 2010թ. ՄԱԶԾ-ԳԷՀ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» և ԲՀՀ-ԿԷՀՀ ծրագրերի շրջանակում: Պահպանվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 6010.74 հա:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքը արևմուտքից եզերված է ՀՀ պետական սահմանով, հարավից Վայքի լեռնաշղթայով, արևելքից Գռավ, իսկ հյուսիսից Արփա գետի հովիտներով (նկար 10):

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման հիմնական նպատակն է չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային Էկոհամակարգերի, մարդու կողմից ստեղծված և ավանդական օգտագործվող լանդշաֆտների, բուսական և կենդանական հազվագյուտ և Էնդեմիկ տեսակների պահպանությունն է և կայուն օգտագործումը:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հայտնի բուսատեսակներից 55-ը (ֆլորայի մոտ 6.1%-ը) գրանցված են 2010 թ. ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝ Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 11 տեսակ: Դրանք են՝ Սոխ անհարթացողուն *Allium scabriscapum*, Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տերեփուկ Թամակյանի *Rhaponticoides tamanianae*, Ստեպտորամֆուս Չերեպանովի *Steptorhamphus czerepanovii*, Սնալրջուն սրապտուղ *Sameraria cardiocarpa*, Սնալրջուն լրջունատերև *Sameraria glastifolia*, Բոշխ կիլիկիական *Carex cilicica*, Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Սզկի Շովիցի *Crataegus szovitsii*, Ստելերոպսիս Մաղաքյանի *Stelleropsis magakjanii* և Խթանաբույս երկարածաղիկ *Centranthus longiflorus*:



Նկար 10.

Անհետացող (EN)՝ 35 տեսակ: Դրանք են՝ Սոխ Վորոնովի *Allium woronowii*, Կապկոդեղ Նրբաճյուղ *Seseli leptocladum*, Տերեփուկ արփայի *Centaurea arpensis*, Ոգնագլխիկ բազմատուն *Echinops polygamus*, Ճուռակախոտ փրչոտ *Hieracium pannosum*, Կղմուխ անցողուն *Inula acaulis*, Կաթնուկ Թախտաջանի *Lactuca takhtadzhianii*, Տոմարթեա դարեղեգիսի *Tomanthea daralaghezica*, Երուկաստրում Թախտաջանի *Erucastrum takhtajanii*, Երեքօրնիկ պարսկական *Hesperis persica*, Վահանակերպ տափակապատիճակ *Peltariopsis planisiliqua*, Չանգակ Մինստերի *Campanula minsteriana*, Մեխակ Լիբանանի *Dianthus libanotis*, Ծվծվուկ Մեյերի *Silene meyeri*, Շնդեղ Նինայի *Colchicum ninae*, Վարդակուկ ոսկեգոծ *Rosularia chrysantha*, Գազ կորաեղջյուրավոր *Astragalus camptoceras*, Գազ չոված *Astragalus divaricatus*, Գազ դարաբաղի *Astragalus karabaghensis*, Գազ կարակուշի *Astragalus karakuschensis*, Գազ արծվասարի *Astragalus montis-aquilae*, Կուրկուրան հիասքանչ *Hedysarum elegans*, Կորնգան Թախտաջանի *Onobrychis takhtajanii*, Գառնառվույտ Կարյագինի *Oxytropis karjaginii*, Հացհամեմ աստղածև *Trigonella astroides*, Հակինթ ատրպատականյան *Hyacinthella atropatana*, Սրոհունդ գեղատես *Hypericum formosissimum*, Հիրիկ ատրպատականյան *Iris atropatana*, Հիրիկ գայլականչ *Iris lycotis*, Սագասոխուն դեղին *Gagea lutea*, Սոլոշիկ Ժերարի *Malvella sherardiana*, Կուժկոտրուն բրդածաղկաբաժակային *Adonis eriocalycina*, Տանձենի խառնված

Pyrus complexa, Կտավախոտ մեղրու *Linaria megrica* և Կարմրան ութառեշ *Tamarix octandra*:

Խոցելի (VU)՝ 9 տեսակ: Դրանք են՝ Նարդես Շովիցի *Ferula szowitsiana*, Շարդինիա խոշորապտուղ *Chardinia macrocarpa*, Տերեփան միջանկյալ *Crupina intermedia*, Չանգակ ազգակից *Campanula propinqua*, Ոգնաթուփ մեխակի *Acantholimon caryophyllaceum*, Ցորեն արարատյան *Triticum araraticum*, Զննմնունկ իզոպիրոնման *Thalictrum isopyroides*, Ալոճ պոնտական *Crataegus pontica* և Խենոբիս գերեյական *Chaenorhinum gerenze*:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են նաև 46 տեսակի Էնդեմներ, որից 16 տեսակ Հայաստանի Էնդեմներ, 20 տեսակ Հարավային Անդրկովկասի Էնդեմներ, 6 տեսակ Անդրկովկասի Էնդեմներ և 4 տեսակ Կովկասի Էնդեմներ

Պահպանվող լանդշաֆտի տարածքում հայտնի տեսակներից 80-ը (ֆաունայի 22.3%-ը) գրանցված են 2010 թ. ՀՀ Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 4 տեսակ,
- Անհետացող (EN)՝ 19 տեսակ,
- Խոցելի (VU)՝ 53 տեսակ,
- Տվյալների անբավարարություն (DD)՝ 4 տեսակ:

Հարկ է նշել, որ ՀՀ Կարմիր գրքում գրանցված 80 տեսակներից 23-ը անողնաշարներ են, որոնց գերակշիռ մասը (21 տեսակ) միջատներն են: Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում գրանցված են հետևյալ տեսակները՝

- Անհետացող (EN)՝ 2 տեսակ: Դրանք են՝ Գիշանգը *Neophron percnopterus* և Կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica*:

- Խոցելի (VU)՝ 9 տեսակ: Դրանք են՝ Ապոլոն *Parnassius apollo kashtshenkoi*, Հայկական լեռնատափաստանային իծ *Pelias eriwanensis*, Մեծ ենթաարծիվ *Aquila clanga*, Բլրային արծիվ *Aquila heliaca*, Բալթբան *Falco cherrug*, Մեհելիի պայտաքիթ չղջիկ *Rhinolophus mehelyi*, Խայտաքիտ *Vormela peregusna*, Բեզդարյան այծ *Capra aegagrus* և Հայկական մուֆլոն *Ovis orientalis gmelinii*:

- Տվյալների անբավարարություն (DD)՝ 4 տեսակ: Դրանք են՝ Կաչուկի իլիկաթիթեռ *Hyles hippophaes caucasica*, Պրոզերպինա իլիկաթիթեռ *Proserpinus proserpina*, Առաջավորասիական մաքուլյա *Trachylepis septemtaeniata* և Արաքսյան գիշերաչղջիկ *Myotis schaubi araxenus*:

- Գրեթե վտանգված (NT)՝ 10 տեսակ: Դրանք են՝ Արիոն կապտաթիթեռ *Maculinea arion zara*, Հայկական իծ կամ Ռադդեի իծ *Montivipera raddei*, Սև անգղ *Aegypius monachus*, Տափաստանային մկնաճուռակ *Circus macrourus*, Ներկարար *Coracias garrulus*, Կիսասպիտակավիզ ճանճորս *Ficedula semitorquata*, Փոքրասիական համստեր *Mesocricetus brandti*, Հարավային պայտաքիթ չղջիկ *Rhinolophus euryale*, Սովորական երկարաթև չղջիկ *Miniopterus schreibersi* և Ջրասամույր *Lutra lutra*: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են 10 տեսակի էնդեմներ:

- Բուն տեղամասի տարածքում նախնական դիտարկումների տվյալներով, ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցվախ տեսակներ չեն հայտնաբերվել:

2020 թվականի փետրվար ամսվա դրությամբ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հողերը հաշվառված չեն որպես բնության հատուկ պահպանվող տարածքների հողեր, հետևաբար դրանց վրա չեն տարածքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Վայոց ձորի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 4.

Անվանումը	Տեղադիրքը
«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում
«Բախտի կամար» բնական քարե թունել	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում
«Անանուն» որմնաքանդակներ	Վայոց ձորի մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս
«Անանուն» լավային ծալքեր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 5 կմ հվ-արլ
«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Ցիցքար» ժայռագագաթ	Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատե վայրում
«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում

